

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

12.08.2014

Մարզի Արգելի համայնք կատարած աշխատանքային այցելության շրջանակներում Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը, համայնքի ղեկավար Մ. Ավագյանի ուղեկցությամբ, ծանոթացել է տեղի միջնակարգ դպրոցում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին:

Շինարարական այս աշխատանքներն ընթանում են մարզի համայնքներում հրատապ հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ Կառավարության կողմից հատկացված ֆինանսական միջոցներով:

Դպրոցի շինարարական աշխատանքներն իրականացնող կազմակերպության պատասխանատուներին Կոտայքի մարզպետը հանձնարարել է սահմանված ժամկետում և որակական չափանիշների լիարժեք պահպանմամբ իրականացնել կրթօջախի հիմնանորոգումը՝ նոր ուսումնական տարվա առաջին օրը դպրոցի սաների համար ապահովելով կրթական հարմարավետ պայմաններ:

Այս համայնքում ևս Կոտայքի մարզպետը ծանոթացել է կենտրոնական ճանապարհի հիմնանորոգված հատվածի ընդհանուր վիճակին, քննարկել համայնքի ճանապարհների հետագա բարեկարգման խնդիրները:

Արգելի առողջության կենտրոնում Կոտայքի մարզպետին ներկայացվել են բուժ. հիմնարկի գործունեության ուղղությունները, զարգացման միտումներն ու հեռանկարները:

Փաստելով բնակչության առողջության պահպանման ասպարեզում ներկա առաջնահերթություններն ու ժամանակի պահանջներին համահունչ սպասարկում կազմակերպելու հրամայականները՝ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը <<Արգելի ԱԿ>> ՓԲԸ-ի պատասխանատուներին հանձնարարել է նորովի մոտեցումներ կիրառել իրենց աշխատանքում:

Համայնքային այս այցելության հաջորդ կանգառը եղել է Արգելի մշակույթի տունը: Մշակույթի օջախում կատարած շրջայցի ընթացքում Կոտայքի մարզպետը կարևորել է համայնքում մշակութային ավանդույթներ կերտելու և մշակութային առօրյան աշխուժացնելու հանգամանքները:

Կոտայքի մարզպետը այցելել է նաև Արգելի մանկապարտեզ, որտեղ կազմակերպված քննարկումներին մաս են կազմել նաև համայնքի դպրոցի, մանկապարտեզի և մշակութային հաստատության սերտ համագործակցության անհրաժեշտությունները: